ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM
SHARE

| | | | |
|---|---|---|---|
| *Համարը* | N 22 | *Տեսակը* | Հիմնական |
| *Տիպը* | Որոշում | *Կարգավիճակը* | Գործում է |
| *Սկզբնաղբյուրը* | | *Ընդունման վայրը* | Երևան |
| *Ընդունող մարմինը* | ՀՀ կառավարություն | *Ընդունման ամսաթիվը* | 12.01.1994 |
| *Ստորագրող մարմինը* | ՀՀ վարչապետ | *Ստորագրման ամսաթիվը* | 12.01.1994 |
| *Վավերացնող մարմինը* | | *Վավերացման ամսաթիվը* | |
| *Ուժի մեջ մտնելու ամսաթիվը* | 12.01.1994 | *Ուժը կորցնելու ամսաթիվը* | |

# ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՈՐՍՈՐԴԱԿԱՆ ՖՈՆԴԻՆ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՉԱՓԸ ՀԱՇՎԱՐԿԵԼՈՒ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հունվարի 1994 թ. N 22

## ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՈՐՍՈՐԴԱԿԱՆ ՖՈՆԴԻՆ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՉԱՓԸ ՀԱՇՎԱՐԿԵԼՈՒ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Սահմանել, որ անտառային տնտեսությանը և պետական որսորդական ֆոնդին պատճառված վնասի հատուցման չափը հաշվարկելու սակագները հաստատում է Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի նախարարությունը համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ:

***(խմբ. 19.02.96 N 60 որոշում)***

2. Անտառային տնտեսությանը պատճառած վնասի դիմաց գանձված գումարների 50 տոկոսը փոխանցվում է հանրապետական բյուջե, որպես անտառային եկամուտ, 50 տոկոսը՝ Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի նախարարության Հայաստանի անտառային պետական ծառայության ընթացիկ հաշվին՝ նրա համակարգի անտառապահպանության ծառայության աշխատողներին խրախուսելու և անտառապահպանության նյութատեխնիկական բազան ամրապնդելու համար:

***(փոփ. 19.02.96 N 60 որոշում)***

3. Այդ կապակցությամբ 1994 թվականի հունվարի 1-ից՝

ա) Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի 1968 թվականի հոկտեմբերի 17-ի «ՍՍՀՄ Մինիստրների սովետի 1968 թվականի օգոստոսի 21-ի «անտառային տնտեսությանը պատճառած վնասի համար նյութական պատասխանատվության կարգի և չափերի մասին» N 641 որոշումը» N 445 որոշման 8-րդ կետից հանել «անտառախախտումներով անտառային տնտեսությանը պատճառված վնասի հատուցման համար գանձված գումարները (այդ թվում կոլտնտեսություններից, անտառային տնտեսության վարման միջտնտեսային ձեռնարկություններից (կազմակերպություններից)՝ կոլտնտեսային անտառներում նրանց կատարած անտառախախտումների համար) ինչպես նաև» բառերը.

բ) ուժը կորցրած ճանաչել Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի 1969 թվականի փետրվարի 21-ի «Անտառային տնտեսությանը պատճառած վնասի դիմաց գանձումների չափը հաշվելու սակագները հաստատելու և այն պաշտոնատար անձանց պատասխանատվություն սահմանելու մասին, որոնց մեղքով թույլ են տրվել անտառախախտումներ» N 113 որոշումը և Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդի 1981 թվականի հունվարի 21-ի «Հայկական ԽՍՀ որսորդական և արգելոցային տնտեսության բարելավման միջոցառումների մասին» N 26 որոշմամբ հաստատված Հայկական ԽՍՀ տերիտորիայում որսի և որսորդական տնտեսության վարման կանոնադրության 41-րդ կետի 2-րդ, 3-րդ և 4-րդ պարբերությունները:

**Հայաստանի Հանրապետության**
**վարչապետ**